2 օգոստոսի 2018 թվականի N 849 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «Պաշտոնական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 1 հավելվածի 5^1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5^1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին սպասարկելու համար Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեին հատկացվում է 19 ծառայողական ավտոմեքենա (այդ թվում՝ 2-ը «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» ծրագրով և 2-ը վիճակագրական համատարած հաշվառումների (մարդահամար կամ գյուղատնտեսական համատարած հաշվառում) կազմակերպման և անցկացման հետ կապված ծրագրերով):».

2) N 2 հավելվածի՝

ա. 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	28.	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե	19	4	15	»,

բ. «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«		Ընդամենը	1690	647	1043	»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. օգոստոսի 3
Երևան